



ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Ս/թ. փետրվարի 4-ին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Բաղդադի հայոց և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Մայր Աթոռի միաբան տ. Պատկառելի հակոբյան Թումայանը վարդապետական աստիճան տվեց Մայր Աթոռի միաբան տ. Ավագ արքեպ. Ասատուրյանին:

Տ. Ավագ վրդ. Ասատուրյանը (ավագանի անունով՝ Վազգեն) ծնվել է Բաղդադում 1942 թ.: Իր սկզբնական կրթությունը ստացել է Բաղդադի հայոց Թարգմանչաց և Սվաճյան ազգային վարժարանում: Այնուհետև նա սովորում է Հիսուսյան քոլեջում և Այ Հիքմա համալսարանում: 1968 թ. մեկնում է Միացյալ Նահանգներ՝ իր ուսումը կատարելագործելու նպատակով, ուր սովորում է ս. Փրոքոփիս քոլեջում: 1970 թ. ավարտում է այն հաջողությամբ և ստանում «Պատկառելի արվեստից» տիտղոսը: Այնուհետև տ. Ավագ վարդապետն ուսանում է Նյու Օռլեան Թուրեյն համալսարանում, որն ավարտում է փիլիսոփայական գիտությունների մագիստրոսի աստիճանով: 1973 թ. հաճախում է Նյու Յորքի և Վլադիմիր օրթոդոքս համալսարան, ուր 1976 թ. ստանում է աստվածաբանական գիտությունների մագիստրոսի աստիճան՝ «Ս. Գրիգոր Նարեկացին որպես միստիկ» ավարտաճառի համար:



1975 թ., ձեռամբ ԱՄՆ-ի արևմտյան թեմի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, Նյու Յորքի հայոց ս. Վարդան եկեղեցում ձեռնադրվում է սարկավազ: 1976 թ. սեպտեմբերին ժամանում է ս. Էջմիածին, ուր իբրև ազատ ունկնդիր հետևում է հոգևոր ճանապարհի հայագիտական և եկեղեցագիտական դասընթացներին՝ միևնույն ժամանակ դասավանդելով անգլերեն լեզու:

1977 թ. մայիսի 29-ին, Մայր տաճարի լուսարարապետ տ. Լուսիկ եպիսկոպոս Մանթուրյանի ձեռամբ, ստանում է կուսակրոն քահանայի աստիճան:

Վեհափառ Հայրապետը փետրվարի 5-ին Բաղդադում խոսած իր քարոզում ցանկու-

յուն է հայտնում, որ տ. Ավագ վարդապետը հետագայում գործի Բաղդադի հայ համայնքի ծոցում որպես «մշակ առանց ամօթոյ», որպես հարազատ զավակը և քաղաքացին Իրաքի այս օրհնյալ հողին և որպես հավատարիմ սպասավորը Հայաստանից եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

«Էջմիածին» տոնազրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է հայր սուրբին և մաղթում եկեղեցանվեր ապագա թեղուն գործունեություն՝ ի մխիթարություն Հայոց Հայրապետի և ի պայծառություն Իրաքի հայ հավատացյալ համայնքի հոգևոր կյանքին:

